# ԱՐՁԱՆԱԳՐՈւԹՅՈւՆ 3

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/62 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների (թվով 5 համայնքների (Թալին, Ռինդ, Եղվարդ, Մարալիկ, Արմավիր) մշակույթի տների հիմնանորոգման/վերակառուցման) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.08.2024թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Ամալյա Դավթյան /գնահատող/

Զարա Ասլանյան /գնահատող/

Սվետլանա Սահակյան /բացող/

Աստղիկ Մարաբյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/62 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/62 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Հիդրոէկ» ՍՊԸ, Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, «ԱՄԱԳ» ՍՊԸ, «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» կոնսորցիում | tokmajyan.hovhannes@gmail.com |
| 2 | «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | sargismarianna@mail.ru |
| 3 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | vigenpapmisho@gmail.com |
| 4 | «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ | vladimir.ispiryan@gmail.com |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

**4.1** Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Հիդրոէկ» ՍՊԸ (կոնսորցիում) | | «Մարգիս և Մարիաննա» ՍՊԸ | | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | | «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | | | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 16150200 | 11900000 | 11900000 | 11900000 | 14280000 | 15855000 | 15855000 | 15980000 | 15980000 |
| 2 | 16736400 | 9000000 | 9000000 | 13000000 | 15600000 | 15955000 | 15955000 | 15880000 | 15880000 |
| 3 | 8322500 | 6000000 | 6000000 | 6000000 | 7200000 | 7920000 | 7920000 | 6150000 | 6150000 |
| 4 | 27418100 | 19000000 | 19000000 | - | - | - | - | - | - |
| 5 | 10636160 | 8000000 | 8000000 | 8000000 | 9600000 | 10555000 | 10555000 | 7950000 | 7950000 |

**5. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

5.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 03.09.2024թ. ժամը 15:00-ին**

**6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 **«Հիդրոէկ» ՍՊԸ, Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, «ԱՄԱԳ» ՍՊԸ, «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող հետևյալ փաստաթղթերը.

6.1.1 Հավելված N 1՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը,

6.1.2 Համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիրը,

6.1.3 Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող փաստաթղթերը,

6.1.4 Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող փաստաթղթերը:

6.1.5 Հայտի ապահովումը՝ 4-րդ չափաբաժնի մասով, ինչը շտկման ենթակա չէ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

6.2 **«Հիդրոէկ» ՍՊԸ, Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, «ԱՄԱԳ» ՍՊԸ, «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» կոնսորցիումի** կողմից հայտով ներկայացված Գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

6.3 **«Սարգիս և Մարիանա» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

6.3.1 Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ժամկետանց է:

6.3.2 Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրերը իրականացված չեն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, հետևաբար չեն կարող գնահատվել որպես նմանատիպ պայմանագրեր:

6.3.3 Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին՝ բացակայում է «գործատուի անվանումը» սյունակը, բացի այդ՝ տեղեկանքում.

1) Բոլոր մասնագետների աշխատանքային փորձն անհրաժեշտ է ներկայացնել ամիս, ամսաթիվ, տարեթիվ ձևաչափով՝ հրավերով սահմանված նվազագույն աշխատանքային փորձին /առնվազն 3 տարվա/ համապատասխանության գնահատումը և մասնակիցներին տրվող միավորների հաշվարկը հստակ իրականացնելու համար:

Ընդ որում՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնագետի համար ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) գործատուից/աշխատավայրից նշված բոլոր ժամանակահատվածների և այդ ժամանակահատվածներում հրավերով պահանջվող գործունեության ոլորտում մասնագետի աշխատանքի վերաբերյալ:

2) Բացակայում են հրավերով պահանջվող տեղեկանքները գործատուից՝ մասնագետների կողմից նմանատիպ պայմանագրի շրջանակներում /վերջին 5 տարվա ընթացքում/ որակավորմանը համապատասխան ծառայություն մատուցած լինելու մասին (Տեղեկանքը կարող է ունենալ մասնակցի կողմից ընտրված ձևաչափ):

3) Բացակայում է հրավերով պահանջվող բարձրագույն դասի Ա ենթադասի արտոնագրված ճարտարապետի որակավորումը հավաստող փաստաթղթերը:

4) Բացակայում է Ճարտարագետ-էլեկտրիկ Սասուն Սամվելի Միրզոյանի հրավերով պահանջվող գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին, իսկ ներկայացված նույնականացման քարտը ժամկետանց է:

5) Ճարտարագետ-հիդրոտեխնիկ Գագիկ Գեղամի Մադաթյանի որակավորումը հավաստող փաստաթղթերով ներկայացված անձնագիրը ժամկետանց է:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

6.4 **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

6.4.1 Հրավերի I-ին մասի 2.4 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում.

1) Մասնագետների աշխատանքային փորձն անհրաժեշտ է ներկայացնել ամիս, ամսաթիվ, տարեթիվ ձևաչափով՝ հրավերով սահմանված նվազագույն աշխատանքային փորձին /առնվազն 3 տարվա/ համապատասխանության գնահատումը և մասնակիցներին տրվող միավորների հաշվարկը հստակ իրականացնելու համար:

Ընդ որում՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնագետի համար ներկայացնել տեղեկանք (տեղեկանքներ) գործատուից/աշխատավայրից նշված բոլոր ժամանակահատվածների և այդ ժամանակահատվածներում հրավերով պահանջվող գործունեության ոլորտում մասնագետի աշխատանքի վերաբերյալ:

2) Բացակայում են հրավերով պահանջվող տեղեկանքները գործատուից՝ մասնագետների կողմից նմանատիպ պայմանագրի շրջանակներում /վերջին 5 տարվա ընթացքում/ որակավորմանը համապատասխան ծառայություն մատուցած լինելու մասին (Տեղեկանքը կարող է ունենալ մասնակցի կողմից ընտրված ձևաչափ):

3) Բացակայում են հրավերով պահանջվող բարձրագույն դասի Ա ենթադասի արտոնագրված ճարտարագետ-կոնստրուկտորի և Կապի համակարգերի ճարտարագետի տվյալները:

9. Մասնակիցների հայտերի գնահատում.

| | ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | Գնահատման առավելագույն միավորը | Մասնակցի գնահատման արդյունքները | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | «Հիդրոէկ» ՍՊԸ (կոնսորցիում) |
| ՄՄ | «Մասնագիտական փորձառություն» չափանիշ.<br>ՄՄ= ՄՊ X 40 / ԼՊ,<br>որտեղ՝<br>ՄՄ-ն «Մասնագիտական փորձառություն» չափանիշին տրվող միավորն է,<br>ՄՊ-ն տվյալ մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրի (պայմանագրերի) գինն է (գների հանրագումարն է),<br>ԼՊ-ն բավարար գնահատված մասնակիցներից գումարային արտահայտությամբ ամենամեծ ծավալի նախկինում կատարված պայմանագիր (պայմանագրեր) ներկայացրած մասնակցի կողմից ներկայացրած պայմանագրի (պայմանագրերի) գինն է (գների հանրագումարն է): | 40 | 40 | 14.58 | 10.61 | 4.32 |
| | | ՄՊ | 55600000 | 20268000 | 14750000 | 6000000 |
| | | ԼՊ | 55600000 | 55600000 | 55600000 | 55600000 |
| ԱՄ | «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշ.<br>ԱՄ = ՄԱ X 40 / ԼԱ,<br>որտեղ՝<br>ԱՄ-ն «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին տրվող միավորն է,<br>ՄԱ-ն գնահատվող մասնակցի ներկայացրած աշխատակազմի մասնագետների պահանջվող ոլորտում աշխատանքային փորձի տարիների հանրագումարն է,<br>ԼԱ-ն բավարար գնահատված մասնակիցներից հանրագումարային առումով ամենամեծ աշխատանքային փորձը ներկայացված մասնակցի աշխատակազմի մասնագետների պահանջվող ոլորտում աշխատանքային փորձի տարիների հանրագումարն է: | 40 | 16.47 | 40 | 13.49 | 14.46 |
| | | ՄԱ | 34.90 | 84.79 | 28.6 | 30.64 |
| | | ԼԱ | 84.79 | 84.79 | 84.79 | 84.79 |
| | «Գնային առաջարկ» ճափանիշ.<br>ԳՄ = ՆԳ X 20 / ՄԱԳ,<br>որտեղ՝<br>ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,<br>ՆԳ-ն նվազագույն գինն է, | | ՆԳ | | | |
| | | Չափաբաժին 1 | 11900000 | | | |
| | | Չափաբաժին 2 | 9000000 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՄԱԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է: | Չափաբաժին 3 | 6000000 | | | |
| | | Չափաբաժին 5 | 7950000 | | | |
| | | ՄԱԳ | | | | |
| | | Չափաբաժին 1 | 11900000 | 15980000 | 15855000 | 11900000 |
| | | Չափաբաժին 2 | 13000000 | 1588000 | 15955000 | 9000000 |
| | | Չափաբաժին 3 | 6000000 | 6150000 | 7920000 | 6000000 |
| | | Չափաբաժին 5 | 8000000 | 7950000 | 10555000 | 8000000 |
| | | 20 | ԳՄ | | | |
| | | Չափաբաժին 1 | 20 | 14.89 | 15.01 | 20 |
| | | Չափաբաժին 2 | 13.85 | 11.34 | 11.28 | 20 |
| | | Չափաբաժին 3 | 20 | 19.51 | 15.15 | 20 |
| | | Չափաբաժին 5 | 19.88 | 20 | 15.06 | 19.88 |
| ՄԳ | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ ՄԳ**<br>**ՄԳ = ՄՄ + ԱՄ + ԳՄ**, որտեղ՝<br>ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,<br>ՄՄ-ն «Մասնագիտական փորձառությանը» տրված միավորներն են,<br>ԱՄ-ն «Աշխատանքային ռեսուրսներին» տրված միավորներն են,<br>ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորներն են: | 100 | ՄԳ | | | |
| | | Չափաբաժին 1 | 76.47 | 69.47 | 39.11 | 38.77 |
| | | Չափաբաժին 2 | 70.31 | 65.92 | 35.38 | 38.77 |
| | | Չափաբաժին 3 | 76.47 | 74.09 | 39.25 | 38.77 |
| | | Չափաբաժին 5 | 76.34 | 74.58 | 39.17 | 38.65 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

**10. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

10.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

**1-ին չափաբաժնի մասով.**

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին,**
**2-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ին,**
**3-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ին,**
**4-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«Հիդրոէկ» ՍՊԸ-ին (կոնսորցիում):**

**2-րդ չափաբաժնի մասով.**

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին,**
**2-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ին,**
**3-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«Հիդրոէկ» ՍՊԸ-ին (կոնսորցիում),**
**4-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ:**

**3-րդ չափաբաժնի մասով.**

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին,**
**2-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ին,**
**3-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ին,**
**4-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«Հիդրոէկ» ՍՊԸ-ին (կոնսորցիում):**

**5-րդ չափաբաժնի մասով.**

**1-ին տեղ** զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին,**
**2-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ին,**
**3-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ին,**
**4-րդ տեղ** զաղեցրած մասնակից ճանաչել **«Հիդրոէկ» ՍՊԸ-ին (կոնսորցիում):**

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

**10.2** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 6.1.5 կետը՝ մերժել **«Հիդրոէկ» ՍՊԸ-ի (կոնսորցիում)** հայտը 4-րդ չափաբաժնի մասով՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

**11. Գնահատման արդյունքների մասին.**

11.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնման գործընթացը **4-րդ** չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

11.2 Հրապարակել գնման ընթացակարգը **4-րդ** չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

11.3 Հաստատել **1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ** չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

_______________ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_______________ Ամալյա Դավթյան

_______________ Զարա Ասլանյան

_______________ Սվետլանա Սահակյան

_______________ Աստղիկ Մարաբյան

_______________ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/